

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱԿՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2014

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2013 թվականի գործունեության

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 2013 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան և ամփոփ տեղեկություններ է պարունակում Հանձնաժողովի գործունեության, կարգավորվող ոլորտների կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումների, ինչպես նաև իր գործունեության ֆինանսական հաշվետվության մասին:

Հաշվետվությունը նշակվել է Հանձնաժողովի աշխատակազմի բաժինների կողմից ներկայացված տեղեկատվությունների հիման վրա:

ՀԱՍՈՒՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը իրականացնում է հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը՝ նպատակ ունենալով օրենքով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը, խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Կարգավորվող ոլորտներն են՝

ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.

բ) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը.

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը.

դ) տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառը.

ե) փոստային կապի բնագավառը.

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով:

Նշված ոլորտներում ծագող հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել օրենքներով ամրագրված գործառնությունների և Ազգային ժողովում հրապարակված 2013 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպում է աշխատակազմի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի աշխատակազմի կողմից նախապատրաստվել է 18 հերթական, 4 համատեղ նիստ, որտեղ քննարկվել ու ընդունվել է 86 որոշում, այդ թվում՝ 25 նորմատիվ, 1 լուկալ և 60 անհատական ակտ: Հանձնաժողովի նիստերին մասնակցել են պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների

և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Կայացել է 2 խորհրդակցություն: Հանձնաժողովի նախագահի կողմից տրվել է 4, իսկ նիստերի արդյունքներով՝ 1 արձանագրային հանձնարարական, որոնք կատարվել են սահմանված կարգով: Ստորագրվել է անձնակազմին վերաբերող թվով 112 հրաման: Հանձնաժողովի նախագահի կարգադրության համաձայն ստուգումների և մոնիթորինգների իրականացման համար պատրաստվել է թվով 265 հրաման (հանձնարարագիր):

Տարվա ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմ մուտք է գործել 530 գրություն, ընդ որում՝ 109 գրություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունից և պետական կառավարման մարմիններից, 421-ը՝ հիմնարկ-ծեռնարկություններից և այլ մարմիններից:

2013 թվականի ընթացքում Հանձնաժողովի պաշտոնական www.kargavorum.nkr.am վեբ կայքում տեղադրվել են 35 հայտարարություն և 47 տեղեկատվություն: Վեբ կայքը ունեցել է 5296 այցելու, այդ թվում՝ 5203-ը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից և Հայաստանի Հանրապետությունից, 11-ը՝ Ռուսաստանի Ղաշնությունից, 13-ը՝ Ադրբեջանից, 12-ը՝ ԱՄՆ-ից, 9-ը՝ Մեծ Բրիտանիայից, 6-ը՝ Գերմանիայի Հանրապետությունից, 5-ը՝ Ֆրանսիայից, 2-ը՝ Բրազիլիայից, 35 այցելու՝ այլ երկրներից:

Հանձնաժողովը հետևողական աշխատանքներ է կատարել իր գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Հանձնաժողովի 12 նիստ լուսաբանվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային հեռուստառադիոընկերությամբ, 8 նիստ՝ «Karabakh-open.info», 4 նիստ՝ «aparaj.am», 5 նիստ՝ «news.am», 3 նիստ՝ «yerevannews.am» էլեկտրոնային կայքերով և 8 նիստ՝ «Вестник» լրատվական թողարկմամբ:

«Հ1» և «Հ2» հեռուստաընկերություններով լուսաբանվել են Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ համատեղ նիստերը և վերջինիս հետ համատեղ անցկացված դիտանցումը: Արցախի հանրային հեռուստատեսությունը «Հայրենիք-Սփյուռք» թողարկմամբ անդրադարձել է Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կատարած այցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով:

Հասարակայնության հետ տարվող աշխատանքները բարելավելու նպատակով Հանձնաժողովի կողմից facebook.com սոցիալական ցանցում բացվել է Հանձնաժողովի պաշտոնական էջը:

Ձանգվածային լրատվության միջոցների կողմից հնչեցված բոլոր հարցերին տրվել են պատասխաններ:

Հանձնաժողովի աշխատակիցների կողմից իրականացվել է թվով 12 գործուղում, որից 4-ը՝ ԼՂՀ շրջաններ, 6-ը՝ ՀՀ համապատասխան հանձնաժողովներ, 2-ը՝ արտերկրներ (Լիտվայի Հանրապետություն՝ ք. Վիլնյուս և Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ ք. Վաշինգտոն):

Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ, որը Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է և ունի շարունակական բնույթ, նույնպես կատարվել են զգալի աշխատանքներ՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման և արդյունավետ ներդրումների խրախուսման ապահովման առաջնահերթություններից:

Օրենսդրական փոփոխությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում Հանձնաժողովը ակտիվ համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության, արտադրական ենթակառուցվածքների նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական և ազգային վիճակագրական ծառայությունների հետ: Հանձնաժողովը մշակել և հաստատել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կանոնադրությունն ու կառուցվածքը՝ նոր խմբագրությամբ, ինչպես նաև դիմել է ԼՂՀ կառավարություն «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ:

Օրենքով սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում Հանձնաժողովը հրապարակել է 2014 թվականի իր գործունեության ծրագիրը:

**ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՈՒՈՐՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ՈՒՂՈՒԹՅԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանրային ծառայությունների ոլորտում 2013 թվականին կատարվել են զգալի աշխատանքներ՝ էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման, ջերմամատակարարման և ջրամատակարարման համակարգերի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Այս ոլորտի վերաբերյալ ընդունվել է 25 իրավական ակտ՝ 13 նորմատիվ և 12 անհատական:

Էներգետիկայի բնագավառում 2013 թվականի ընթացքում իրականացվել են էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց («Արցախէներգո» ՓԲԸ, «Արցախգազ» ՓԲԸ, «ԱրցախՀԷԿ» ԲԲԸ, «Իզոտոպ Դելտա» ՍՊԸ, «Պրոտոն» ՓԲԸ, «Ալֆամագ» ՓԲԸ և «Ջերմային տնտեսություն» ՓԲԸ) կողմից գործունեության վերաբերյալ ներկայացված ֆինանսական հաշվետվությունների, տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծություն և բազայի համալրում, լիցենզիաների պայմանների վերահսկում, «Սյունիք 3» և «Սյունիք 4» փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման լիցենզիաների պայմանների ուսումնասիրություններ, վերականգնվող էներգետիկայի բնագավառի զարգացման տեմպերի ուսումնասիրություն (ՓՀԷԿ-եր): Ընթացքի մեջ է գտնվում էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների ձևերի լրամշակման հետ կապված առաջարկությունների ներկայացումը:

Ջրային համակարգի ոլորտում կատարվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունների, ծառայությունների մատուցման որակի ցուցանիշների ամփոփում և բազայի համալրում («Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ, «Ջրային տնտեսություն» ՓԲԸ և «Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ), լիցենզիաների պայմանների վերահսկում:

Սահմանվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի 2013 թվականի վաճառքի սակագները, ինչպես նաև վերանայվել և սահմանվել են խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման, սպառողներին վաճառվող բնական գազի սակագները:

Կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող անձանց կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության ընթացքում կազմակերպվել են քննարկումներ՝ լիազոր մարմնի, շահագրգիռ անձանց, արհմիությունների ֆեդերացիայի և լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Տրվել են առաջարկություններ՝ հանրային ծառայությունների կարգավորման բնագավառում գործող ընկերությունների միջև կնքված պայմանագրերի գրանցման վերաբերյալ:

Հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում 2013 թվականին ընդունվել է 29 որոշում, որից 8-ը՝ նորմատիվ, 21-ը՝ անհատական:

2013 թվականին էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել է տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 5 լիցենզիա և ռադիոհաձախականության օգտագործման 1 թույլտվություն: Փոփոխություն է կատարվել 1 լիցենզիայի և 4 ռադիոհաձախականության օգտագործման թույլտվության մեջ՝ գործունեության վայրի և ռադիոհաձախականության միավորի փոփոխման նպատակով: Ուժը կորցրած են ճանաչվել թվով 2 տաքսի ծառայության ռադիոհաձախականության օգտագործման թույլտվություն:

Նշված միջոցառումների հետ զուգահեռ 2013 թվականի հունիսին՝ Հանձնաժողովը հիմնվելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում իրականացվող քաղաքականության վրա, որի հիմքում ընկած է սպառողների և ծառայություն մատուցողների շահերի հավասարակշռումը և հեռահաղորդակցության ոլորտի բարելավումը, ընդունել է համապատասխան որոշում, որի համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հասարակական վայրերում

տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը (ինտերնետային ակունքները) ազատվել են պարտադիր լիցենզավորումից:

2013 թվականին փոփոխվել են որոշ միջազգային զանգերի սակագներ, սահմանվել են «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական հեռախոսակապի նոր հավելյալ ծառայությունների սակագները: Կանխավճարային համարների համար կիրառվող «Փոխանցիր ինձ» և «Փոխանցիր» հավելյալ ծառայությունների սակագների սահմանմամբ բաժանորդների համար հնարավորություն է ընձեռվել համապատասխան հրահանգներ հավաքելու միջոցով միմյանց փոխանցել 100 դրամից մինչև 2000 դրամի չափով գումար: «Փոխանցիր ինձ» ծառայության արժեք է սահմանվել 0 դրամ մեկ հաղորդագրության համար, որի օգնությամբ բաժանորդն օրական կարող է ուղարկել առավելագույնը 3 հրահանգ՝ գումար ստանալու խնդրանքով: Իսկ «Փոխանցիր» ծառայության արժեքը մեկ հաղորդագրության համար սահմանվեց 40 դրամ:

Հանձնաժողովի և «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների նվազեցված սակագներ են սահմանվել օպտիկամանրաթելային կապով մատուցվող անսահմանափակ մուտքով ինտերնետ կապի համար, նվազել են անսավճարները՝ ըստ արագությունների:

Ընդլայնելով մատուցվող ծառայությունների ցանկը՝ սահմանվել են նաև մինչ այդ չմատուցվող մինչև 5 Մբիթ/վրկ արագությամբ կապի անսավճարներ՝ օպտիկամանրաթելային և DSL մոդեմ տեխնոլոգիաների համար:

2013 թվականի ընթացքում սահմանվել են Wi-Fi տեխնոլոգիայով ինտերնետ կապի ծառայությունների սակագները «Ինտերնետ դպրոցներին» սակագնային պլանում՝ նույն DSL և օպտիկամանրաթելային տեխնոլոգիաներով ինտերնետ կապի պայմաններով, Wi-Fi երթուղիչների (ռադիոմոդեմ անլարային կապ) միջոցով ինտերնետի նոր չորս արագություն, ինչպես նաև փոփոխվել է Wi-Fi տեխնոլոգիաներով ինտերնետ կապի մինիմալ շեմը՝ նախկին 128 կբիթ/վրկ արագության փոխարեն՝ 512 կբիթ/վրկ:

2013 թվականին գործարկվել է երկար սպասված երրորդ սերնդի ցանցը, և սահմանվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության նոր շարժական ինտերնետ ծառայության սակագնային պլանների սակագները:

Մինչ այդ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում էր միայն GSM-900 ստանդարտի հիման վրա գործող 2G ցանց: Երրորդ սերնդի ցանցի գործարկումից հետո ապահովվող 3G ծածկույթը բաժանորդներին նաև շարժական ինտերնետ ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռեց: Նշված սակագնային պլանների սահմանմամբ բջջային կապի կանխավճարային և հետվճարային քարտերի բաժանորդները հնարավորություն ստացան ընտրելով այս կամ այն սակագնային պլանը՝ օգտվելու շարժական ինտերնետ ծառայությունից կամ գնելով USB-մոդեմ՝ օգտվելու նշված ծառայությունից նոութբուք, այփհադ և այլ նմանատիպ սարքավորումների միջոցով: Նշված որոշմամբ ընդլայնվեց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկայում մատուցվող ծառայությունների ցանկը:

Բացի նշված միջոցառումներից Հանձնաժողովի կողմից տրված համաձայնության հիման վրա 2013 թվականին «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության կողմից հայտարարվել են մի շարք հրապարակային օֆերտաներ, որոնց շնորհիվ «Նիկիտա Մոբայլ» ՍՊ ընկերության հետ համագործակցության արդյունքում բաժանորդներին հնարավորություն ընձեռվեց քվեարկելու «Հայաստանի ծայն» նախագծի նախընտրած մասնակցի օգտին, գյուղական բնակավայրերի բաժանորդները հնարավորություն ստացան միանալ ինտերնետ կապին անվճար տեղադրվող Wi-Fi մոդեմի միջոցով, նոր հետվճարային համարները՝ «Շահավետ» սակագնային պլանից օգտվելու դեպքում, տրամադրվեցին անվճար՝ առանց 2000 դրամ միացման վճարի ու 5000 դրամ դեպոզիտային գումարի և այլն:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ԼՂՀ օրենքի դրույթներին համապատասխան՝ 2013 թվականին հայտարարվել են մի շարք լիցենզավորման մրցույթներ, որոնց արդյունքում լիցենզավորվել է 1 հեռուստառադիոընկերություն և 1 ռադիոընկերություն:

Հանձնաժողովը, **տնտեսական մրցակցությունը** դիտելով որպես շուկայական հարաբերությունները խթանող և կարգավորող ուժ, այդ բնագավառում իրականացրել է աշխատանքներ՝ ուղղված մրցակցային միջավայրի հետազոտությանը, գնային քաղաքականությանը, գերիշխող դիրքի և հակամրցակցային գործողությունների

բացահայտմանը: Ընդունվել է այդ բնագավառին առնչվող 23 որոշում, որից 21-ը՝ անհատական, 2-ը՝ նորմատիվ:

Հիմք ընդունելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը՝ Հանձնաժողով 2013 թվականի հունվարի 28-ին ընդունել է «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրության ձևը սահմանելու մասին» և «Հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատելու մասին» որոշումները:

2013 թվականի ընթացքում Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման 49 դիտանցում: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել հագուստի խանութների դիմային մասում ոչ ճիշտ արտապատկերված սեզոնային բնույթ կրող գեղջերի վրա: Նշված խնդրի վերաբերյալ դիտանցումներն իրականացվել են 2012 թվականից սկսած, 2013 թվականի ընթացքում ուսուցողական աշխատանքները շարունակվել են և դիտանցումների ընթացքում ի հայտ եկած խախտումներն ու թերությունները վերացվել են:

Նշված ժամանակահատվածում հայաստանյան շուկայում ի հայտ եկած կեղծ «Reeddy» անվանումով բուսական յուղի շրջանառության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովից ստացված տեղեկությունների և ԼԴՀ Հանձնաժողովի կողմից իրականացված դիտանցումների հաջողվել է կանխել նշված կեղծ ապրանքատեսակի շրջանառությունը ԼԴՀ-ում:

2013 թվականին իրականացված ստուգումների ընթացքում հայտնաբերվել են «Արցախկաթ» և «Առաջնեկ» ՓԲ ընկերությունների կողմից խախտումներ՝ արտադրության և պահպանման ժամկետների ոչ պատշաճ մակնշման կամ դրա բացակայության, ապրանքի արտադրության և պատրաստման եղանակների մասերով:

Այդ կապակցությամբ «Արցախկաթ» և «Առաջնեկ» ՓԲ ընկերությունների նկատմամբ օրենքի խախտման համար հարուցվել է վարչական վարույթ և տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ նշանակվել տուգանք՝ 300 հազարական ՀՀ դրամի չափով:

Ելնելով գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծության արդյունքներից՝ առաջարկվել է հետագա ուսումնասիրությունների ժամանակ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների իրացման ծավալների փոփոխման պատճառով առավել մեծ ուշադրություն դարձնել «Յորենի ալյուր», «Մակարոն» և դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներին:

Հանձնաժողովը կաթնամթերքի շրջանառության ոլորտի (կաթ, մածուց, կաթնաշոռ, թթվասեր), «Հավի ձու», «Պանիր» և «Մարգարին» ապրանքային շուկաների ուսումնասիրություն իրականացնելու և դրանց կառուցվածքը պարզելու նպատակով դիմել է նշված ապրանքային շուկաներում գործող տնտեսավարող սուբյեկտներին՝ ներկայացնել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկություններ:

Արդյունքում «Դվին» ՍՊ ընկերությունը՝ «Հավի ձու» ապրանքային շուկայում, «Արցախկաթ» և «Առաջնեկ» ՓԲ ընկերությունները՝ կաթնամթերքի շրջանառության ոլորտում (պաստերիզացված կաթ, մածուց, կաթնաշոռ, թթվասեր), «Արցախ կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը՝ «Պանիր» ապրանքային շուկայում, համարվել են գերիշխող դիրք ունեցողներ:

Այսպիսով, 2013 թվականին ընդհանուր առմամբ առկա են 5 մենաշնորհի դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ՝ 6 ապրանքային շուկաներում և 24 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ՝ 44 ապրանքային շուկաներում:

Հանձնաժողովը մանրածախ առևտրի ոլորտում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով դիմել է նշված ոլորտում գործունեություն իրականացնող մի շարք տնտեսավարող սուբյեկտների՝ իրենց կառավարման ներքո գտնվող կամ միևնույն առևտրային նշանի կամ անհատականացման այլ միջոցի ներքո գործող առևտրային օբյեկտների քանակների, գործունեության հասցեների, հեռախոսահամարների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջով:

Բաժնի կողմից 2013 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Ստեփանակերտ քաղաքում իրականացվել է պարենային և ոչ պարենային 35 ապրանքային շուկաների 78 ապրանքատեսակների մանրածախ գների թվով 85 դիտանցում 30 առավել խոշոր առևտրային օբյեկտներում և կատարվել դրանց արդյունքների վերլուծություն: Մոնիթորինգների արդյունքում արձանագրվել են գների իջեցում, մասնավորապես «Հնդկաձավար», «Ոսպ», «Շաքարավազ», «Ձեթ», «Մսամթերք» ապրանքային շուկաներում: Առավել մեծ գնաճ է արձանագրվել «Հաց», «Ալյուր», «Աղ», «Ձու», «Կաթնամթերք», «Պանիր», «Մարգարին»,

«Երշիկ», «Նրբերշիկ», «Գագ», «Կարտոֆիլ», «Սոխ» ապրանքային շուկաներում: Մանրածախ գների դիտանցումների արդյունքում «Այուր», «Հաց», «Կաթնամթերք», «Ձու», «Մսամթերք (հավի միս)» ապրանքային շուկաներում տեղի ունեցած թանկացման պատճառները ուսումնասիրելու նպատակով Հանձնաժողովը դիմել է գերիշխող դիրք ունեցող ընկերություններին՝ ներկայացնել տեղեկություններ և կատարել համապատասխան ուսումնասիրություններ:

Հավելագինը և շահութաբերության մակարդակը պարզելու նպատակով կատարվել է ուսումնասիրություն գրենական պիտույքների շրջանառության ոլորտի (տետր, գրիչ, մատիտ, քանոն, օրագիր և պայուսակ) ապրանքային շուկաներում: Պարզվել է, որ նշված ապրանքատեսակների վրա կիրառվող հավելագինը կազմում է 20-27 %: Հաշվարկվել են նաև առաջին դասարան հաճախելու համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերման համար նվազագույն և միջին ծախսերը. նվազագույնը կազմել է 4900 դրամ, միջինը՝ 11545 դրամ:

Զիմնավորված գների բացահայտման նպատակով նախաձեռնվել են նաև դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներում ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 7 գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներից 6-ի մոտ գերիշխող դիրքի չարաշահում, այդ թվում՝ չիմնավորված գնի կիրառում չի հայտնաբերվել, իսկ «Ֆարմացիա» փակ բաժնետիրական ընկերությունում արձանագրված որոշ դեղերի իրացման և ձեռքբերման գների ինդեքսների զգալի (ավելի քան հինգ տոկոս) տարբերության պատճառով ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ և տրվել նախազգուշացում:

Հաշվի առնելով կաթնամթերքի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաներում տեղի ունեցած թանկացումները՝ Հանձնաժողովը դիմել է նշված ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող «Առաջնեկ» և «Արցախ կաթ» ՓԲ ընկերություններին՝ ներկայացնել պաստերիզացված կաթի, թթվասերի, կաթնաշոռի և մածնի ինքնարժեքները ձևավորող ծախսային բաղադրիչների վերաբերյալ տեղեկություններ, որոնցից պարզվել է, որ տնտեսական պայմանների (գործոնների) ազդեցությունից ելնելով ինքնարժեքի և ընկերությունների կողմից արտադրվող և իրացվող կաթնամթերքի իրացման գների բարձրացումը կատարվել են անհամաչափ: Ընկերությունների նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, ապա՝ կարճվել վարույթի շրջանակներում վերոնշյալ տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենքի պահանջների խախտումները վերացնելու արդյունքում:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություն մատուցող «Տեխնոսերվիս» ՍՊ և **Փոստային կապի բնագավառում** լիցենզավորված «Արցախփոստ» ՓԲ ընկերությունների կողմից Հանձնաժողով են ներկայացվել եռամսյակային, կիսամյակային և տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել են նրանց ֆինանսական գործունեության արդյունքների վերլուծություն և տրվել համապատասխան առաջարկություններ: Բաժնի կողմից պարբերաբար պատրաստվում են բնագավառին վերաբերող նյութեր և տեղեկատվություններ, որոնք գետեղվում են Հանձնաժողովի վեբ-կայքում: Իրականացվում է լիցենզավորված ռադիոընկերությունների եթերների ընտրանքային դիտարկում, որի արդյունքները համադրվում են յուրաքանչյուր ամիս ներկայացվող ռադիոհաղորդումների գրանցամատյանների արդյունքների հետ, ինչը թույլ է տալիս ստուգել ռադիոընկերությունների եթերների համապատասխանությունը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին:

ՀԱՍՏԱՏՈՒԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից ստորագրված համաձայնագրերի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված փորձի փոխանակմանը, վարչական վարույթների իրականացմանը, տեղեկատվության տրամադրմանը, օրենսդրական ակտերի մշակմանը և կիրառմանը:

Համագործակցության շրջանակներում հաստատվել են հանձնաժողովների 2013 թվականի համատեղ աշխատանքային ծրագրերը, ՀՀ ՏՄՊՊ հանձնաժողովի աջակցության շնորհիվ բացվել է համակարգչային կաբինետ ԼԴՀ ՀԾՏՄԿՊ հանձնաժողովում, ուսումնասիրվել է ապրանքների գնագոյացման ընթացքը՝ առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաներում, իրականացվել է համատեղ դիտանցում՝ ապրանքային շուկաների գների և անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով, հանձնաժողովի աշխատակիցները գործուղվել են Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով՝ հեռարձակվող ծրագրերի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսդրությանը համապատասխանության մշտադիտարկմանը մասնակցելու նպատակով, որը իրականացվում էր տեսագրությունների անմիջական դիտարկման արդյունքների, գրանցամատյանների և ընկերություններից ստացված տեղեկատվության հիման վրա:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2013թվականի ընթացքում իրականացվել է Հանձնաժողովի կողմից հաշվառման վերցված սուբյեկտների հաշվառման կազմակերպում, մասնավորապես տարվա ընթացքում հաշվառման է վերցվել 8 նոր սուբյեկտ: Ռադիոհաձախականության օգտագործման պարտադիր վճար վճարողներին գրավոր ծանուցում է ներկայացվել 2013թվականի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար վճարման ենթակա պարտադիր վճարների և դրանց չափերի մասին:

2013թվականի ընթացքում պետական բյուջե է մուտքագրվել է **364700.0** հազ. դրամ, որից՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարներ՝ **81432.4** հազ. դրամ, պետական տուրք՝ **16478.6** հազ. դրամ, ռադիոհաձախականության օգտագործման պարտադիր վճարներ՝ **265646.5** հազ. դրամ, կարգավորման պարտադիր վճարների ուշացման համար վճարված տույժ՝ **29.7** հազ. դրամ, պետական տուրքի ուշացման համար վճարված տույժ՝ **42.8** հազ. դրամ, այլ վճարներ (վերաձևակերպման համար)՝ **20.0** հազ. դրամ, ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման համար՝ պետական տուրք **450.0** հազ. դրամ, տուգանք (վարչական վարույթ)՝ **600.0** հազ. դրամ:

Աշխատակազմի ղեկավար

Հ. Թորոսյան